ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԽՈՒՄԲ՝ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝Հայրենասիրություն գաղափարի ամրապնդումը պատմության դասավանդման գործընթացում 6_րդ դասարանում:

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ԳՈՀԱՐ ՀՈՎԻԿԻ ԼՈՒԼՈՒԿՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բովանդակություն

Ներածություն 2

Գրականության ակնարկ.....3_6 **Հետազոտության**

մեթոդները.....6_9 **Եզրակացություն**

9

Գրականության ցանկ 10

Հավելված.1 11-12

Հավելված.2 13

Ներածություն

Չկա ոչինչ հայրենիքից առավել սիրելի...

Լուկիանոս:

Մեզանից յուրաքանչյուրին մանուկ հասակից պատմել են մեր հայրենիքի Հայաստանի և նրա անցյալի մասին:Գրեթե բոլորս ունենք սիրելի հերոսներ,որոնց շատ կցանկանայինք նմանվել:Գիտենք նաև,որ մեր հրաշալի Մատենադարանը կրում է հանճարեղ Մեսրոպ Մաշտոցի անունը,մայրաքաղաք Երևանում կանգնեցված են Հայկ Նահապետի,Վահագն Վիշապաքաղի,Վարդան Մամիկոնյանի,Սասունցի Դավթի,Գարեգին Նժդեհի`մեր քաջարի նախնիների և հերոսների արձանները,պողոտաներին ու փողոցներին տրված են մեր պետական,հոգևոր ու մշակութային մեծ գործիչների`Տիգրան Մեծի,Սրբ.Գրիգոր Լուսավորչի, Մովսես Խորենացու,Կորյունի,Եզնիկ Կողբացու,Դավիթ Անհաղթի անունները:Մեզանից շատերը,իրենց մեջ կրում են մեր հոգուն հարազատ նվիրական անուններ ինչպիսիք են Հայկ,Արամ ,[1]Արա,Վահագն,Տիգրան,Գրիգոր,Արշակ, Վարդան,Աշոտ,Գագիկ,Դավիթ,Ռուբեն,Շուշանիկ,Այծեմնիկ,Սոսե և այլն:Հայոց փառքն անմահացրած որքան պանծալի անուններ կան,որ դեռ պետք է ճանաչենք:Իմանալով նրանց հայրենանվեր գործունեության և անձնազոհ սխրագործությունների մասին`մենք կկարողանանք մեր կյանքի ճանապարհը ճիշտ հունով տանել:Հայ ժողովրդի ներկան կարելի է իմաստավորել հայրենասիրական ոգով և ապագային նայել հույսով ու հավատով`ծանոթանալով նրա պատմական անցյալին`ծագմանը, առաջընթացին,գոյատևման պայքարին:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է օտար նվաճողների դեմ հանուն հայրենի ազատության ու անկախության:Հայոց ազատամարտի ջահը Հայոց ձորից փոխանցվելով Ավարայր,Զեյթուն,Սասուն,Վան և Սարդարապատ,եկել հասել է ազատագրական պայքարի հարուստ պատմություն ունեցող Արցախ:

Պատմությունը շարունակվում է.... Հայրենիքի ազատագրությանը իրենց կյանքը պարգևող հերոսներն անմահանում են:Հավերժ փառք և խոնարհում անմահացած քաջերին...և ուժ ու կորով,ամուր կամք մեր բոլոր զինվորներին:

---

[1] Մովսես Խորենացի <<Պատմություն Հայոց>>.,Երևան.;1981:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ,կործանվում դրա պակասի պատճառով: Հայրենապաշտական դաստիարակություն.ահա մեր փրկության խարիսխը :[2] Գարեգին Նժդեհ

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր.այն է՝դաստիարակել հայրենասեր սերունդ:Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը:Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում,քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնվածը մեր այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը,ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր:

Հայրենիքի նկատմամբ սիրո զգացմունքը,որը գործնականորեն արտահայտվում է նրան ծառայելու մեջ,կոչվում է հայրենասիրություն:

<<Հայրենասիրությունը ծագում է լատիներեն <<պատրիոտ[3]>> բառից,նշանակում է հայրենիքը սիրող:Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է:Այն սոցիալական դիրքորոշում է,որի հիմնական բաղադրիչը սերն է:

Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու՝դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է,այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ >>:[4]

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

---

2 ,http://www.anunner.com/news/armenians-about-armenians/%D4%B3%D4%B1%D5%90%D4%B5%D4%B3%D4%BB%D5%86_%D5%86%D4%BA%D4%B4%D4%B5%D5%80_-_%D5%84%D4%B5%D5%8B%D4%B2%D4%B5%D5%90%D5%88%D5%92%D5%84%D5%86%D4%B5%D5%90

3 Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969:

4 Յ.Ա.Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան,Մանկավարժություն,ուսումնական ձեռնարկ,Երևան,2005:

Գիտամանկավարժական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը,որ աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացվում է 3-փուլով՝

ա).կրտսեր դպրոցում (1-4-րդ դասարաններ) հայրենասիրական պատկերացման հիմքեր են ձևավորվում, բ).հիմնական դպրոցում (5-9-րդ դասարաններ) ձևավորվում է աշակերտի հայրենասիրական մտածողությունը, գ).ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ)աշխատանքներ են տարվում սովորողի հայրենասիրական գիտակցության ձևավորման ուղղությամբ:

Սույն հետազոտության նպատակը հանրակրթության մեջ աշակերտի բարոյական դաստիարակության մասնավորապես հայրենիքի նվիրյալի և պաշտպանի ձևավորման գործընթացում վերը նշված երեք փուլերով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությունը ապահովող մեթոդների և հնարների մշակումն ու համակարգումն է:

Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը:Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն,ազգային հոգեկերտվածք՝նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը:

Հանրակրթության երկրորդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները: Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին,զարգացնում նրանց ստեղծագործական,վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ:Իսկ մյուս ուսումնական առարկաները (<<ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն>>, <<Աշխարհագրություն>>,ՏՀՏ և այլն) ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համատեքստում հարուստ նյութ են տալիս ինտեգրված դասեր անցկացնելու համար:

«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» բնագավառի 5-12-րդ դասարանների նոր չափորոշիչով ,հիմնական[5] (միջին) դպրոցում «Հայագիտություն» բնագավառի ուսուցման նպատակն է՝

1. Հետազոտել հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներն ու բացթողումները:
2. Համադրել և հակադրել պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը:
3. Ցույց տալ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:
4. Զարգացնել քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու,

[5] Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ:

5. Հասկանալ անհատի,հասարակության և միջավայրի փոխազդեցության փոխկապակցվածությունը:
6. Ձևավորել պատմական մտածողություն:
7. Գործել որպես պատասխանատու քաղաքացի:

Սովետական ուսուցիչ,մեծ մանկավարժ Վասիլի.Ա.Սուխոմլինսկին,իր գլխավոր ձեռքբերումն է համարել <<Իմ սիրտը երեխաներին եմ տալիս >> գիրքը,[6] և իր ողջ կյանքը նվիրել է երեխաների դաստիարակությանը և նրանց մեջ անհատականության դրսևորմանը: << Երեխաների դպրոց հաճախելու հենց առաջին օրերից,ես նրանց հետ միասին սկսում եմ ճանապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության,պատվի,փառքի,անկախության համար կատարված սխրանքների աշխարհը>> :[7]

Հետևելով մեծ մանկավարժի խոսքերին միջին դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝դրական օրինակով,հայրենիքի մասին զրույցներով,միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն: Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ:

- էքսկուրսիաների ,արշավների իրականացում ,երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը,սիրում հայրենի հողը,
- մասնակցություն ազգային տոներին,սովորողները ճանաչում են ազգային տոները,անձամբ մասնակցում տոնակատարություններին,
- զրույց,դասախոսություն,բանավեճ աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները,բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ,
- պատմական թեմաներով կինոդիտում,փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին,
- հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ,սովորողները անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն:

---

[6] Վասիլի.Ա.Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» (1969),

[7] Վասիլի.Ա.Սուխոմլինսկին,«Ինչպես դաստիարակել իսկական մարդ»(1980):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դասն անցկացրել եմ 6_րդ դասարանում,

որտեղ սովորում են 24 աշակերտ:

Դասի թեման՝ Հայոց հայրենիքը(4_ժամ)

Դասի նպատակը՝ Հայոց հայրենիքի մասին աշակերտների ձեռք բերած գիտելիքների համակարգում,վերլուծական,հետազոտական կարողությունների ու հմտությունների զարգացում:

Կարողունակություններ՝1,լեզվական գրագիտություն և կարողունակություն.2 սովորել սովորելու կարողունակություն.5 թվային և մեդիա կարողունակություն.

Հետազոտության հարցը՝ Ինչպե՞ս խթանել հայրենասիրության գաղափարը:

Հիմնակական հասկացություն՝ Հայրենասիրություն.

Միջառարկայական կապեր՝Աշխարհագրություն,Գրականություն,ՀԵՊ.

Կահավորում՝Մեծ Հայքը ըստ <<Աշխարհացույցի>> քարտեզ,ՀՀ վարչական քարտեզ, ՀՀ և Արցախի պետական խորհրդանիշներ,գունավոր մարկերներ,պաստառներ,դասագիրք,պատմության տետր.

Վերջնարդյունք՝1.Նկարագրի իր բնակության վայրը,պետությունը,հայոց հայրենիքը,նրա աշխարհագրական դիրքը, սահմանները, պատմաաշխարհագրական միջավայրը:

2.Ներկայացնի հայրենիքի խորհրդանիշները:

Մեթոդական հնարներ՝մտագրոհ,պրիզմա,կարճ դասախոսություն,

քառաբաժան,աղյուսակներ,ֆոկուս խմբեր:

Կապը Հանրակրթական պետական չափորոշչով սահմանված հիմնական դպրոցի վերջնարդյունքների հետ՝Հ5.1.1.,Հ5.1.2.,Հ5.1.3

Դասի ընթանցքը

Քննադատական մտածողության զարգացմանն ուղղված ԽԻԿ համակարգի ներդրմամբ դասի խթանման փուլում աշակերտներին առաջարկում ենք պրիզմայի օգնությամբ

ներկայացնել << հայրենասիրություն>> սկզբնաբառը:

Այնուհետև աշակերտներին հանձնարարում ենք կազմել նախադասություններ պրիզմայի սկզբնաբառով և վերջնաբառով:Սա տրամաբանական կապ է ապահովում երկու հանգուցային բառերի միջև և գործի է դնում աշակերտի քննադատական-ստեղծագործական մտածողությանը:


Հայրենասիրություն
հող
ծննդավայր
մշակ
դաշտ
հայր
մայր
միրգ
գետակ
տարածություն
անսահմանություն
տուն
օջախ
սեր
բնություն
անդորրություն
գերդաստան
հանգստություն
հոգեվիճակ
ընտանիք
ազատություն

Դասի իմաստի ընկալման փուլում գործադրում ենք

<<Կարճ դասախոսություն>> մեթոդական հնարը:

Աշակերտներից մեկը հանդես է գալիս իր ամփոփ խոսքով,ներկայացնելով Հայկական լեռնաշխարհի դիրքն ու սահմանները:

Դասը շարունակում ենք համագործակցային եղանակով:Դասարանը բաժանվում է վեց հոգանոց չորս խմբերի,որոնցից յուրաքանչյուրին տրվում են հետևյալ առաջադրանքները՝

1_ին խումբ՝օգտվելով քարտեզներից՝փորձել նկարել Հայկական լեռնաշխարհի քարտեզը՝նշելով բարձր լեռներն ու լեռնաշղթաները:

2_րդ խումբ՝օգտվելով համացանցից՝ներկայացնել մեր հայրենի երկրի անվանումները հայ և օտար աղբյուրներում հիշատակված:

3_րդ խումբ՝օգտվելով պատմության դասագրքից՝ [8] ներկայացնել Հայաստանի վաղ շրջանի պատմավարչական պատկերը:

4_րդ խումբ՝կազմել Հայաստանի և Արցախի պատկերզարդ այցեքարտերը՝նշելով պաշտոնական անվանումը,մայրաքաղաքը,տարածքը,բնակչության թիվը,պետական լեզուն,կրոնը,արժույթը,պետական կառուցվածքը:

Դասի կշռադատման փուլում առաջարկում ենք լրացնել քառաբաժանը:

Ի՞նչ գիտեի	Ի՞նչ զգացի
Ի՞նչ իմացա	Ի՞նչ սովորեցի

Հետադարձ կապի ապահովման նպատակով դասի ավարտին անդրադառնում ենք պրիզմայի նախնական գրառմանը՝ պարզելու՝ ինչքանով էին հայրենասիրության մասին աշակերտների սկզբնական պատկերացումները համապատասխանում ուսուցման վերջնարդյունքներին:Ուսուցիչն աշակերտների օգնությամբ ամփոփում է դասը՝հարցուպատասխանի միջոցով՝ասելով, որ հայրենիքը միայն հող ու ջուր չէ, որ արժանի է և ենթակա է պաշտպանության իր զավակների կողմից:Հայրենիքը մի մեծ տուն է, ընտանիք, որի համար մարդը պետք է աշխատի և որը պետք է ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը

[8] Հայոց պատմություն :6_րդ դաս.:Դասագիրք հանրակրթական հիմնական դպոցի համար/Ա.Մելքոնյան,Ա.Մովսիսյան,Է.Դանիելյան,._Եր;<< Զանգակ>>.հարտ.:2013._176էջ:

պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր հայի համար պատիվ պիտի լինի :[9]

Մենք,այսօր դարձել ենք աշխարհի այն քիչ ժողովուրդներից մեկը, որը նաև պետություն ունի:

Ի վերջո՝ այս մեծ մոլորակում կա ընդամենը 193 պետություն,և դրանցից մեկը մերն է՝ Հայաստանի Հանրապետությունը:

Դասի վերջում հանձնարարվում է տնային առաջադրանք՝տետրում լրացնել Հայկական լեռնաշխարհի մասին աղյուսակը:

Դիրքը,հարևան տարածքները	
Նշանավոր լեռնագագաթները	
Նշանավոր դաշտերը	
Գետեր,լճեր	
Բույսեր,կենդանիներ	

Եզրակացություն

Այսպիսով, հանրակրթական դպրոցում պատմության դասավանդման գործընթացում սովորողների հայրենասիրական դաստիարակության ուսուցումը նպատակահարմար է իրականացնել դասարանական և արտադասարանական պարապմունքների միջոցով՝խթանելով հայրենասիրության, ազգասիրության գաղափարը՝ ի նպաստ սովորողի ռազմահայրենասիրական դաստիարակության:

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսուցման ժամանակակից մանակավարժական տեխնոլոգիաներ՝ դրանցում ընդգրկելով ՏՀՏ-ների ժամանակակից ինտերակտիվ մեթոդների և միջառարկայական կապերի ընձեռած հնարավորությունները:

[9] https://images.app.goo.gl/eXGsTyerVAJH4WNC9
https://images.app.goo.gl/1Wk4dHrYTUydcpw3A

Գրականության ցանկ

1. Յ.Ա.Ամիրջանյան,Ա.Ս.Սահակյան,Մանկավարժ ություն,ուսումն ական ձեռնարկ,Երևան,2005:

2. Մովսես Խորենացի <<Պատմություն Հայոց>>.,Երևան.;1981:

3. Հայոց պատմություն :6_րդ դաս.:Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար/Ա.Մելքոնյան,Ա.Մովսիսյան,Է.Դանիելյան,._Եր;<< Զանգակ>>.հարտ.:2013._176էջ:

4. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ:

5. Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտ, ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969;

6.Վասիլ Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» (1969):

7.Վասիլի Սուխոմլինսկին,«Ինչպես դաստիարակել իսկական մարդ»(1980):

http://www.anunner.com/news/armenians-about-armenians/%D4%B3%D4%B1%D5%90%D4%B5%D4%B3%D4%BB%D5%86_%D5%86%D4%BA%D4%B4%D4%B5%D5%80_-_%D5%84%D4%B5%D5%8B%D4%B2%D4%B5%D5%90%D5%88%D5%92%D5%84%D5%86%D4%B5%D5%90



Հայաստան ասելիս այտերս այրվում են,

Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,

Չգիտեմ ինչու է այդպես:

Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,

Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,

Չգիտեմ ինչու է այդպես:

Հայաստան ասելիս աչքերս լցվում են,

Հայաստան ասելիս թևերս բացվում են,

Չգիտեմ ինչու է այդպես:

Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,

Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է...

Կմնամ,կլինեմ այսպես:

Հ.ՍԱՀՅԱՆ: